

Ս. Մ. Մինասյան

## ՍԱԱԴԻԻ «ԳՈՒԼԵՍԹԱՆԸ» ԵՎ ՆՐԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ

Համաշխարհային դասական գրականության մեջ իր արժանի աեղն է նվաճել իրանական գրականության հանճարներից մեկը՝ Շեմսեդդին Սաադի Շիրազին, որի կյանքը աեել է ավելի քան մեկ դար (1184—1292): Նա սովորել է Բաղդատի հայտնի «Նիզամիե» համալսարանում և ունկնդրել ժամանակի նշանավոր գիտնականներին:

Իր երկարամյա կյանքի երեսուն տարին Սաադին ճանապարհորդել է, տեսել շատ երկրներ, ծանոթացել բազմաթիվ ժողովուրդների կյանքին ու կենցաղին, ուսումնասիրել մարդկանց՝ սկսած հասարակ ոամիկից մինչև վերնախավը, կրոնական ու աշխարհական, շեյխ ու սուլթան: Նա իր ստացած բարձր գիտությունը, երկարատև ճանապարհորդությունների ընթացքում կուտակած մեծ կենսափորձը և լայն աշխարհայեցողությունը հանրադրմարի է բերել և վերարտադրել իր գեղարվեստական ստեղծագործություններում, հատկապես «Բուսթան» և «Ռուսթան» մեծածավալ երկերում:

«Ռուսթանը», որ հեղինակի ստեղծագործության պսակն է, չափածոյախառն արձակ երկ է: Այն բաղկացած է ընդարձակ նախերգանքից և ութ գլուխներից, ուր տարբեր պատմվածքների, առածների, առակների և ժողովրդական ասույթների միջոցով բանաստեղծը իր դիտողություններն է անում կյանքի բազմաթիվ երևույթների նկատմամբ, սուր քննադատում ու ծաղրում աշխարհիկ ու հոգեոր իշխաններին: Միաժամանակ նա իր խորհուրդներն ու առաջարկներն է անում կրթության, դաստիարակության, խոհեմության ու լուսության, և դիտողությունները՝ սիրո, երիտասարդության, ծերության ու տկարության մասին, այդ բոլորից բխեցնելով իր բարոյախոսությունը՝ կյանքի, աշխատանքի, վեհանձնության, ազնվության, մարդասիրության ու գեղեցկի մասին: Բոլոր առաքինությունների հիմքը Սաադին համարում է դաստիարակությունը, կրթությունն ու գիտությունը:

Սակայն, այս բոլորից առաջնայինը՝ մարդու հասարակական վիճակն է, աղատությունն ու անկախությունը:

Երջանիկ ապրելու համար պետք՝ ձեռք բերել անկախություն ոչ միայն իր, այլև ուրիշների համար, սրա հետ մեկտեղ պետք է լինել լավատես, տոկուն: Նրա համոզմամբ «մի կտոր ցամաք հաց ուտելն ավելի լավ է, քան ոսկի գոտի կապել ու թագավորի հրամանին ոտքի կանգնել»<sup>1</sup>: Նա ժխտում է այն բաժանումը, որ կատարված է հարուստի և աղքատի, թագավորի ու ծառայի միջև, քանի որ թե՛վ հարուստին, և՛ աղքատին այս նույն հոգն է կյանք տվել»<sup>2</sup>: Նա լավ տեսնում է, որ իր ապրած հասարակարգում մարդն ազատ չէ, նրա կյանքը միշտ վտանգի տակ է և միակ փրկություն

<sup>1</sup> Սաադի, Գուլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., Երևան 1958, էջ 69:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 42:

ու օսպահովությունը պալատից ու պալատականներից, պետական պաշտոններից ու պաշտոնյաններից հեռու լինելն է, քանի որ «թագավորի մոտ պաշտոնավարելը երկու կողմ ունի, հաց վաստակելու հույս և կյանքից զրկվելու վտանգ»<sup>3</sup>:

Սաադին ինչպես մյուս երկերում, այնպես էլ «Գուլեսթանում» մեծ տեղ է հատկացնում հասարակական տարբեր խավերին: Նա հատկապես բարյացակամ վերաբերմունք է ցույց տալիս ստրուկների նկատմամբ, ցավակցում է նրանց վիճակին, որոնք զնվում են ու վաճառվում և զուրկ են իրենց նմանների վայելած արտոնություններից: Նրա համակրանքն են վայելում նաև հողագործները, որ վարում են չարքաշ կյանք և ապրում իրենց սեփական աշխատանքով:

Սաադին ֆեոդալական տիրապետության պայմաններում, թագավորական իշխանությունը դարձնում, ամենայն սրությամբ և անողորմաբար քննադատում է թագավորներին, նրանց բռնությունները, կեղեքումները, անիրավությունները, ապօրինի պատիժները, անտեղի և կատաղի զայրույթը և ցույց տալիս դրանց պատճառած ծանր հետևանքներն ու աղետները: Նա համարձակորեն հիշատակում է այդպիսի թագավորների ու իշխանավորների անունները և դրանց հակադրում իր տեսակետով ազնիվ, բարի, բարեգործ ու առատաձեռն արքաներին:

Չնայած այս բոլորին, արևելագետների մի մասը Սաադին համարում է սուֆիական ուղղության գրող, նրան դնելով այնպիսի միստիկ մտածողների կողքին, ինչպիսիք են Ջալալեդդին Ռումին և Ֆարիդադդին Աթթարը: Մինչդեռ Սաադիի մոտ այնքան ուժեղ է դրսևորված սոցիալական բողոքն ու հումանիզմը, ինչպես և ծաղրն ու քննադատությունը իր ժամանակակից սուֆիների նկատմամբ, որ միանգամայն անհիմն է դարձնում այդպիսի մոտեցումը:

Իսկ ի՞նչ է սուֆիզմը: Փաստորեն այն դժգոհության և հիասթափության արտահայտություն է, որ հանդել է ասկետիզմի և իրականության վերացական որոնման: Այն բողոքի ուրույն մի ձև է ուղղված ֆեոդալական հասարակության ու իսլամի դեմ և պատահական չէ, որ սուֆիզմն իրանական գրականության մեջ առավել տարածում է գտել հատկապես 13-րդ դարի սկզբում՝ Ջինգիզ-խանի արշավանքից ու նրա պատճառած արհավիրքներից հետո: Անշուշտ, վերնախավն այն օգտագործել է որպես հարմար զենք մասսաներին թմրեցնելու համար, օգտվելով այն կեղծ ուսմունքից, որ աստվածային ճշմարտության ձգտող մարդը պետք է անցնի որոնումների մի շարք աստիճաններ, մինչև որ բարձրագույն աստիճանում լիովին միաձուլվի աստվածության հետ: Պանթեիզմի գաղափարախոսությունը մի շարք սուֆիների հասցրեց մատերիալիստական աշխարհաճանաչման նախադրանք: Նրանք միստիկի կեղեի տակ բացահայտորեն հանդես էին գալիս օպոզիցիոն-ընդդիմադիր տրամադրություններով՝ ընդդեմ իշխող ֆեոդալական կարգերի: Այս տեսակետից շատ բնորոշ է Ֆ. Էնգելսի հետևյալ բնութագիրը. «Ֆեոդալիզմի ընդդիմադիր հեղափոխությունը անցնում է ամբողջ միջնադարով: Նա, ժամանակի պայմանների համաձայն հանդես է գալիս մերթ միստիկի կերպարան»:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 48:

քով, մերթ րացահայտ հերետիկոսի և մերթ էլ զինված ապստամբության ձեռք»<sup>4</sup>։

Շատ լրանաստեղծներ սուֆիզմն օգտագործեցին որպես արտաքին կեղեքող աղատամտորեն հումսնիստական հայացքներ քարոզելու, սեր երգելու, բնությունը և մարդու գեղեցկությունը փառաբանելու համար։ Սակալն, Սաադին զերծ է նաև այս կեղեքից։ Նա իր բոլոր մտորումները, տեսակետներն ու հայացքները պետական սիստեմի ու ղեկավարների, զգայական սիրո ու գեղեցկության մասին արտահայտում է անկեղծ, անպաճույճ, պարզ ու մեկին, շիտակ ու համարձակ։

Մնուշտ ժամանակի ոգին, մոնղոլների արշավանքների ժանր հետևականները չէին կարող բացարձակապես Սաադիին հեռու պահել հոռետեսությունից, ճգնափորությունից ու ճակաագրապաշտությունից։ Դրանով են բացատրվում նրա ստեղծագործության մեջ տեղ գտած հակասությունները, իրարամերձ մտքերն ու գաղափարները։ Սակալն Սաադիի ստեղծագործություններում նկատվող միատիպիզմի և ֆատալիզմի մասնակի երևույթները բնորոշ չեն նրա ստեղծագործության ամբողջ ոգուն։ Կրոնա-փիլիսոփայական մի այնպիսի ուղղության տիրապետության դարում, ինչպիսին էր սուֆիզմը, Սաադին քննադատել է ոչ միայն իշխող կարգերը, դատապարտել նրանց բռնությունն ու անարդարությունը, այլև բազմաթիվ հեքիաթների միջոցով ծաղրել ու ձաղկիլ է սուֆիներին, շեյխերին, մերկացրել նրանց կեղծ բարեպաշտությունը, գալթակղություններն ու անառակությունները, որկրամոլությունն ու դրամասիրությունը, չարախոսությունն ու խարեությունը, խարդախությունն ու գողությունը։ Նա իր իսկ շեյխի լեռանով դատապարտում է սուֆիների ցիրուցան, անմիաբան լինելը և ասում. «Սրանից առաջ աշխարհում սուֆի մարդիկ առերևույթ ցիրուցան էին, իսկ իրականում՝ միաձուլ, սակալն այսօր առերևույթ միաձուլ են, բայց իրականում՝ ցիրուցան»<sup>5</sup>։

Սաադին հակառակ իր շեյխ լինելու հանգամանքին, իր ամբողջ կյանքը անցկացրել է ազատ ու անկաշկանդ և իր զգացումները համարձակորեն դրսևորել է թե՛ իր լիրիկական պոեզիայում և թե՛ «Գոլեսթանում»։ Նա երիտասարդական ավյուրով է խոսում անկեղծ սիրո, նրա հրապուրանքների, կապանքների ու կախարհանքների մասին։ Նա սիրուց մորմոքված սրտով բացականչում է.

Բարեկամներ, սիրո խայթից ազատներին ասացեք,

Թե գուք բնավ ցավ ունեցող սրտից ոչինչ չգիտեք<sup>6</sup>։

Նրա սերն այնքան խորն է, որ ինքն ևս խոստովանում է իր զերի դառնալն այդ սիրուն։

<sup>4</sup> К. Маркс и Ф.Энгельс, Крестьянская война в Германии, Соч., изд. 2-ое, т. 7, стр. 361.

<sup>5</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 91։ Այս հատվածի թարգմանությունը Ի. Ալիզադեի մոտ հետևյալն է. «Они были раньше в этом мире людьми внешне бедными и внутренне богатыми. А теперь они, наоборот, внешне богаты, а внутренне бедны». М. Саади, Избранное, Сталинабад (Душанбе), 1984, стр. 12. Պարսկերենի հետ կատարված համեմատությունը սլարդեց, որ ճիշտը Մելիք-Վարդանյանի թարգմանությունն է։

<sup>6</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 188։

Բարեկամներ, մի աշխատեք արշավել իմ սիրույս դեմ,  
 ևս էությամբ, ամբողջովին իմ սիրածի գերին եմ:  
 Ռազմիկները սպանում են ձեռքով, բազկով ու սրով:  
 Գեղատեսիլ սիրունները սպանում են հուր սիրով<sup>1</sup>:

Դեռ ավելին. նա սիրով է տանում սիրածի բոլոր սեթևեթանքներն ու վիրավորանքները և բերում իմաստունների այն խոսքը, թե Մավելի հեշտ է սիրտը տանջանքների ենթարկել, քան աչքը սիրած էակին տեսնելուց հեռացնելը<sup>2</sup>:

Սերը Սաադիի համար ամենամեծ քաղցրությունն է: Չկան ավելի լավ օրեր, քան սիրո ժամանակ, սերն սկիզբ ունի և վերջ չունի: Նրա սիրո զգացումները բարձր են ու նվիրական: Նա տեսչում է սիրուհու հետ նստել առավակի ափին, գիտել դաշտերը և քաղել նրա այտի վարդերը: Սիրուհու շունչն ու բուրմունքը, ըստ բանաստեղծի, ոչ միայն անմահություն են տալիս, այլև մեռյալին զերեզմանից հանում:

«Գոլեսթանը» մտքերի ու պատկերների անվերջ շարան է՝ համեմատած ժողովրդական իմաստության ակունքներից բխող առակներով, առածներով, խրատներով, որոնք հազեցած են խոր փիլիսոփայություն ու ավարտվում են սուր եզրակացություններով: Այս հանգամանքը ավելի հաճելի, դուրընթեռնելի և խորիմաստ է դարձրել գիրքը, որովհետև ժողովրդական լուրաքանչյուր պարզ խոսքի մեջ թաքնված է կյանքից բխող մի մեծ փիլիսոփայություն, հանճարեղ միտք, հեղինակի հոգուն այնքան հարազատ, որ դրանք նա հաճախ ներկայացրել է որպես իր եզրակացություններն ու ամփոփումները:

Համամարդկային զաղափարների, մեծ հումանիզմի և անպարփակ սիրո համար Սաադին համաշխարհային ճանաչում է նվաճել: Եվ պատահական չէ, որ նրա «Գոլեսթանը» ունի 200-ից ավելի թարգմանություն՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, արաբերեն, հնդկերեն, հինգի, իտալերեն, լեհերեն, թուրքերեն, ռումիներեն, հայերեն և այլ լեզուներով:

«Գոլեսթանի» լայն տարածման շնորհիվ Եվրոպայում շատ հեղինակներ զրել են նրա ազդեցությանը և նմանողությամբ: Դան Հիշատակություններ, որ 17-րդ դարի հեղինակներ Լաֆոնթենը, Մյսեն, ավելի ուշ Դիդրոն, Նյուտոն, Մադամ դե Բուվալմորը, Մադամ Ռոլանը, Բալզակը և ուրիշներ «Գոլեսթանի» պատմություններից ու առակներից շատերը նույնությամբ վերցրել և մուծել են իրենց երկերի մեջ:

Վոլթերը, իր նամակներից մեկում խոսելով Սաադիի թարգմանության մասին, ասում է. «Երբ ինձ կառարկեք՝ պարսկերեն գիտե՞ք որպեսզի թարգմանեք Սաադիին, ես երգվում եմ, որ ոչ մի բառ չգիտեմ, բայց Սաադիին թարգմանեցի այնպես, ինչպես Լամոթը Հովիսին է թարգմանել»:

Ռոլանը 1880 թ. դրած իր «Իսկապես մերոնցից է» հոդվածում հիացմունքով զրում է. «Նրա անխախտ չափի զգացումը, հմայքն ու միտքը, որ ողբշնչում են իր պատմությունները, նրա ներողամիտ հեղնանքը, որով նա քննադատում է մարդկային սխալներն ու չարիքները, այդ բոլորը այնքան

<sup>1</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 181:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 156:

<sup>3</sup> Voltaire, Oeuvres complètes, Paris, 1897, vol. 35, p. 400.

հաղվագյուտ, Արեւելքը մեզ սիրելի են դարձնում, կարծեք կարդում եք մի լատին բարոյախոսի, կամ 16-րդ դարի մի երգիծարանի»<sup>10</sup>,

Իսկուրին հայտնի է, թե ինչպիսի բարձր գնահատական է տվել Գյոթեն 1788 թ. Վալմարի հրատարակության մեջ պարսկական գրականության հանճարներին, որոնց մեջ մտնում է նաև Սաադին: Նա գրում է. «Ահում են, որ պարսիկները հինգ հարյուր տարվա իրենց բոլոր բանաստեղծներից արժանավոր համարել են միայն չոթին, մինչդեռ իրենց կողմից արհամարհված մնացածների մեջ էլ շատերը կլինեն ինձնից ավելի լավ»:

Իրանական գրականությունը, Սաադիի կերպարը շատ դեպքում դարձել են հիացման ու ոգեշնչման աղբյուր համաշխարհային խոշոր դեմքերի համար: Այն իր արտացոլումն է գտել նաև հայ գրականության մեջ: Հատկանշական է մեծանուն վարպետ Ավետիք Իսահակյանի «Օմար Նալլամի վեճը աստծու հետ» լեզնեյը և «Սաադիի վերջին դարունը» արձակ պոեմը, որոնք իսահակյանական հանճարի փայլով կերտված հուզական ու խոհական բարձրարվեստ հոյակապ կոթողներ են, արժանի հուշարձան մեծ Սաադիին:

«Գոլեսթանը» շնորհիվ իր արծարծած գաղափարների ու մատչելի լեզվի, բոլոր ժամանակներում հանդիսացել է պարսկերեն լեզվի ձևափոխման հույս մինչև մեր օրերը, ինչպես օտար, այնպես էլ հայկական միջնադարի և բարձրագույն դպրոցներում: Հայտնի է Նաչատուր Արուստանի վկայությունն այն մասին, որ «...թուրքերն իրենց մզկիթներում... թուրքերենի անվան տակ մեր բարի մուլաների մոտ կարդում են «Գոլեսթանը», Հաֆեզը, Թարեք Նազիրի և պարսիկ այլ հեղինակներ...»<sup>11</sup>:

Այս վկայությունը հաստատում է նաև այն, որ հայ մեծ լուսավորիչը ծանոթ է եղել պարսից գրականությանը, և ինչպես տեսնում ենք, Սաադիի «Գոլեսթանին»:

«Գոլեսթանը» դասագրքի դեր է կատարել նաև Պոլսո ինչպես թուրքական, այնպես էլ հայկական դպրոցներում, թե՛ պարսկերեն և թե՛ տաճկերեն լեզվի ուսուցման համար: Պատահական չէ, որ ականավոր գիտնական Հրաչյա Աճառյանը ևս երևանի Պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժնում պարսկերեն լեզվի համար որպես հիմնական դասագիրք ընտրել էր իր իսկ հրատարակած Սաադիի «Գոլեսթանը»:

Սաադիի ստեղծագործություններից ուսուսերեն լեզվով թարգմանություններ առաջին անգամ 1831 թ. կատարել է Մատվեյ Կամազովը — Մաթևոս Դամազյանը<sup>12</sup>, որը հայտնի չի եղել ուսուսաադիագիտներին:

«Գոլեսթանի» առաջին ուսուսերեն թարգմանությունը պատկանում է Ստեփանոս Նազարյանցին: Այն հրատարակվել է 1857 թ. Մոսկվայում:

Հայ գրական միտքը ևս մեծ հետաքրքրություն է ցուցաբերել դեպի իրանական խոշոր բանաստեղծն ու մտածողը, թարգմանելով նրա մի շարք

<sup>10</sup> M me Roland, Memoires, Paris, 1880.

<sup>11</sup> Ք. Արուստան, Երկ. լիակ. մոդ., հ. 5, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1950, էջ 193:

<sup>12</sup> Բ. Հովսեփյան, Սաադիի «Գոլեսթանի» 700-ամյակը (տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 1958, № 127, и журнал „Сын отечества“, Москва, 1837, стр. 429—430): Այդ նույն Մաթևոս Դամազյանի ջանքերով 1832 թ. Թիֆլիսում բեմադրվել է Ալ. Ս. Գրիբոյեդովի «Քելբից պատահասը» և ինքն էլ, դեռևս 20-ամյա պատանի սպա, ստանձնել է Ֆամուսովի դերը: Մինչ այդ նա մասնակցել էր Պետերբուրգի բեմադրությունը և բավականաչափ բեմական փորձ ունենր (տե՛ս Վ. Վարդանյան, Գրիբոյեդովը և հայ թատրոնը, Երևան, 1955, էջ 37—38):

բանաստեղծությունները և առանձին հատվածներ «Բուսթանից» ու «Գոլեսթանից»։ Սաադիի թարգմանությունամբ զբաղվել են հայտնի թարգմանիչներ Հովհաննես Խան Մասեհյանը, Մեսրոպ վարդապետ Մաքսուտյանը, դոկտոր Հարություն Թիրյաքյանը, Հովսեփ Միրզայանը, բազմապատակ գիտնական Հրաչյա Աճառյանը և ուրիշներ։

Սաադիի ստեղծագործությունների ամենավաղ թարգմանությունը հայերեն լեզվով հանդիպում ենք Գեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյան Պալատցու կազմած պարսկերեն-հայերեն բառարանում, որ հրատարակված է 1826 թ. Կոստանդնուպոլսում<sup>13</sup>։ Այստեղ հեղինակը բառերի բացատրության ընթացքում ի թիվս այլ հեղինակների բազմաթիվ օրինակներ է բերում նաև Սաադիի ստեղծագործություններից և հատկապես «Գոլեսթանից»։

Երկու տասնամյակ հետո (1845—1847 թ.) Կալկաթայում հրատարակվող «Ազգասեր» հանդեսի էջերում տպագրվում է երկու հատված Սաադիից։ Այնուհետև Թիֆլիսի «Մուրճ», «Լուսա» հանդեսներում և «Զարթոնք» գրական-գեղարվեստական ժողովածուում, Փարիզի «Անահիտում», Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» և Հրանտ ու Զապել Ասատուրների կազմած «Գանձարան» դասագրքի էջերում (Կ. Պոլիս)։ Իսկ Թեհրանի «Նոր գաղափար» և «Լույս» հանդեսները, «Վերածնունդ» շաբաթաթերթը, ինչպես նաև «Նավասարդ» ժողովածուն՝ Հ. Միրզայանի, Ա. Ամուրյանի, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ հաջորդաբար հատվածներ են հրատարակել Սաադիից։

«Գոլեսթանի» ամբողջական հայերեն թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1920-ին Նյու-Յորքում, Հարություն Թիրյաքյանի թարգմանությամբ։ Հաջորդ թարգմանությունը պատկանում է Ա. Մելիք-Վարդանյանին (1958 թ. Երևան)։

Ինչպես նախորդ թարգմանությունները, այնպես էլ այս վերջին թարգմանությունը մեծ ներդրում է հայ թարգմանական գրականության գանձարանում։ Երանք հնարավորություն են տալիս լայն մասսաներին ծանոթացնելու իրանական ժողովրդի գրական հարուստ ժառանգության կոթողներից մեկի հետ։

«Գոլեսթանի» թարգմանիչները մեծ ջանք ու աշխատանք են ներդրել առերևույթ պարզ թվացող, բայց ըստ էության շատ բարդ ու դժվարին գործի թարգմանությունը հաջողությամբ պսակելու համար, և պետք է ասել, որ ընդհանուր առմամբ նրանց այդ հաջողվել է։ Սակայն չնայած թարգմանիչների մեծ գգուշության և բարեխղճության, նկատելի են զգալի թերություններ։ Այսպես, մերթ արձակը թարգմանել են սեղմ ու ամփոփ, մերթ էլ ձգձգել են չափածոն, որից անշուշտ տուժել է տաղաչափական արվեստը, բարենշունությունը։ Երբեմն էլ տարվելով բանաստեղծական արվեստով զգալիորեն հեռացել են բնագրից։ Բերենք մի քանի օրինակներ։

جون بدرجت گل بر سبتم بوی گلو جوان مست کر که دامنم از دست برفت

Այս նախադասությունը Մելիք-Վարդանյանը թարգմանել է. «Շենց որ հասա, վարդի բուրմունքին այնպես հարեցրեց ինձ, որ քղանցքը ձեռքիս բաց ընկավ»<sup>14</sup>։

<sup>13</sup> Այս ազդյունը մեզ մատնացույց է արել բանասեր Բ. Չուգասոյանը։

<sup>14</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 17—18։

Նախ, խոսքը բնագրում ոչ թե վարդի բուրմունքին հասնելու մասին է, այլ՝ վարդենուն (بد رخت گل), իսկ նթե թարգմանիչն ուղղում է ասել վարդի բուրմունքին է հասել, ապա «վարդ» բառից առաջ դրված ստորակետն ավելորդ է: Այնուհետև «Քղանցքը ձևաբիս բաց ընկավ», նախադասությունը հայերեն չէ, պետք է լինի՝ «Քղանցքը ձևաբիս ընկավ», ինչպես բնագրում է (دامنم از دست بردفت):

Այս հատվածը միանգամայն ճիշտ են թարգմանել Թիրյաքյանն ու Աճառյանը: Առաջինը թարգմանել է «Երբ որ հասա, վարդի բույրը այնպես զմայլեցույց դիս որ զոգը ձևաբիս գնաց»<sup>15</sup>: Աճառյանի թարգմանությունը՝ «Երբ հասա, վարդի բույրը հարբեցրեց ինձ այնպես, սր քղանցքս գնաց ձևաբիս»:

Թիրյաքյանն ու Աճառյանը «վարդ» բառը երկու տեղամ չկրկնելու համար չեն թարգմանել بد رخت گل (հենց որ հասա վարդենուն), այլ պարզապես գրել են «Հենց որ հասա», որով և հարադատ են մնացել բնագրին, խուսափել են ավելորդ կրկնությունից: Սակայն Թիրյաքյանը «հարբեցրեց» բառի փոխարեն գրել է «զմայլեցրեց», որ ճիշտ չէ:

مکر کوشه خاطرشی با جمال یکی از شاگردان میل داشت سجد و  
بنجاه و نه بندشی بیاموخت مکر یک بند که در تعلم ان تاخیر کردی

Այս նախադասությունը Մելիք-Վարդանյանը թարգմանել է. «Սրտի խորքում նա իր աշակերտներից մեկին, որին համակրում էր, սովորեցրել էր այդ ձևերից երեք հարյուր հիսուն ինը և թաքցրել էր մեկը»<sup>16</sup>:

Թարգմանությունը սխալ է. ոչ թե «Սրտի խորքում իր աշակերտներից մեկին սովորեցրել էր...», այլ «Նա իր աշակերտներից մեկին, որին սրտի խորքում համակրում էր, սովորեցրել էր...»: Թիրյաքյանն այդ նույն նախադասությունը թարգմանել է այսպես. «Իր աշակերտներին մեկուն որ շատ կը սիրեր 359 կերպը, սորվեցուց», բացի մեկն զոր իրեն վերապահեց<sup>18</sup>, որն ավելի մոտ է բնագրին:

نگارمن چو در ابو بخنده نمکین  
نمک زیاده بند بر جراحت ریشان  
چه بودی آرسر رنقشی بدستم افسادی  
چو آستین کریمان بدست درویشان

Այս քառյակը Մելիք-Վարդանյանը թարգմանել է՝

Ի՞նչ գեղանիս երևում է քաղցր դեմքով ժպտազին,  
էլ ավելի աղ է ցանում նա իմ ամեն մի վերքին.  
Ախ, թե ձևաբիս շաղ գալին իր սև մազերը տարածված,  
ինչպես ձևաբը բարի մարդու ղեպի աղքատն երկարած<sup>19</sup>.

Իսկ Թիրյաքյանը՝

<sup>15</sup> Սաադի, Գոլեսթան, չ. Թիրյաքյանի թարգմ., էջ 51:

<sup>16</sup> Սաադի, Գոլեսթան, չ. Աճառյանի թարգմ. (անձնական արխիվ):

<sup>17</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 62:

<sup>18</sup> Սաադի, Գոլեսթան, չ. Թիրյաքյանի թարգմ., էջ 56:

<sup>19</sup> Սաադի, Գոլեսթան, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմ., էջ 161:

Ազու ժպիտով երբ երևնա իմ նկար  
 Մի կը դնե ուրտերու մեջ վիրահար.  
 Ի՛նչ կ'ըլլար, ա՛հ, թե ձեռքս ի՛նչար ներա հերք  
 Ինչպես քըղանցք ողորմածի խեղճի ձեռք<sup>20</sup>:

«Գեղանի» և «նկար» բառերը նույն իմաստն ունեն, ինչպես բացատրում է նաև Թիրյաքյանն իր ծանոթագրություն մեջ: Առաջին տողը Մելիք-Վարդանյանի մոտ ճիշտ է, սակայն Թիրյաքյանը نمکین نمکین արտահայտությունը ճիշտ չէ թարգմանել: نمکین բառը «աղի» իմաստից բացի ունի նաև «հաճելի» իմաստ, ուստի և Մելիք-Վարդանյանի՝ «քաղցր դեմքով ժպտադին» թարգմանությունը միանգամայն հարազատ է իմաստին, մանավանդ, որ «աղի դեմք» դարձվածքը բացասական իմաստ ունի: Այդ քառյակում Սաադին, որպես պարսկական բանաստեղծական հնարանք, առաջին տողում نمکین բառը օգտագործել է իրեն ածական, իսկ հաջորդ տողում, որպես գոյական:

Այս կարգի շեղումներ, որ փոխում են իմաստը և հեռանում հեղինակի արտահայտած մտքերից, շատ կա՛ն, բայց բավականանա՛նք նշվածներով:

Թե՛ մեկ և թե՛ մյուս թարգմանիչների մոտ տեղ են գտել բազմաթիվ ավելորդ նախադասություններ ու բառեր, որոնք ձգձգում ու խճողում են միտքը: Եթե բանաստեղծական տողերում դրանք արված են չափի պահպանման նպատակով, ապա արձակ հատվածներում դրանց առկայությունը բոլորովին չի հիմնավորվում: Օրինակ, Մելիք-Վարդանյանը թարգմանել է.

«Դուք, զույգ ափեր, իմ հաղթ ձեռքեր, (իմ մկաններ աննման)» (էջ 42)<sup>21</sup>,  
 Հաջորդ էջում՝ «Լավ է, ասի, որ քնած է (ու չի տանջում թշվառներին)»  
 կամ «Քաարե չես հասնի, Բեդվին, (ես այդ լավ եմ իմանում)» (էջ 78): Նույն տեղում՝ «Իսկ թերությունը (մարդկանցից դու խիստ) զաղտնի ես պահում»:  
 Այս չափածո տողերում (իսկ այդպիսի օրինակներ շատ կան) բառերի կեսը, նույնիսկ երբեմն կեսից ավելին, ավելորդ են, և եթե կարդանք առանց դրանց կտեսնենք, որ իմաստը ոչ միայն չի տուժում, այլև սեղմ կերպով է արտահայտվում: Նույն Մելիք-Վարդանյանի թարգմանություն 145-րդ էջում կարդում ենք հետևյալ քառատողը.

Այն տունը, որ ունի քեզ պես (անցանկալի) հարևան,  
 (Ամենաշատ միայն) տասը (կեղծ) արծաթի է արժան.  
 (Ապագայում) կարելի է սակայն մի հույս ունենալ,  
 Որ կարող է քո մահից ետ հաղար (ոսկի) արժենալ:

Եթե փակագծերում առնված բառերը, որոնք ավելացրել է թարգմանիչը, հանվեն, ոչ միայն բնագիրը չի աղճատվի, այլև քառյակը բանաստեղծական արվեստի տեսակետից էլ չի տուժի:

Այնուհետև այդ քառյակի երկրորդ տողը սխալ է թարգմանված. պետք է լինի «տասը արծաթ պակասի է արժան», ինչպես բնագրում է:

Մի այլ քառյակ Մելիք-Վարդանյանը թարգմանել է.

<sup>20</sup> Ս ա ա դ ի, Գ ո լ ե ս թ ա ն, Հ. Թիրյաքյանի թարգմ., էջ 151:

<sup>21</sup> Այստեղ և ստորև փակագծերի մեջ վերցված բառերը ավելացված են թարգմանչի կողմից:

Հրեշտակը, եթե ընկեր դառնա դեմն (դավադիր),  
 Կըստվորի նրա խարդախ, չար արարքներն (անխտիր):  
 Վատից (երբեք) չես սովորի որեէ բան (հաշոդակ),  
 (Իր էութեամբ) դերձակ լինել չի կարող դալը (վայրագ)<sup>22</sup>:

Այստեղ ևս բոլոր տողերի վերջին, ինչպես և երրորդ ու չորրորդ տողերի երբեք, իր էութեամբ՝ բառերը ավելորդ են: Բացի այդ, պարսկերենում վանկերի չափը 8—11 է, մինչդեռ Մեկիք-Վարդանյանը դարձրել է 15, իսկ Թիրյաքյանի մոտ՝ 10 է:

Մի քանի օրինակ Թիրյաքյանի թարգմանությունից:

«Վեղիբին տված խրատները թագավորին դուր չեկան, շուտ տվավ գլուխը և բանտ խրկեց անի» (էջ 31): Այստեղ միջանկյալ նախադասությունը միանգամայն անտեղի է: Մի այլ օրինակ. «Թագավորը մեծապես պատվեց մեծարեց զայն և վարձատրեց» (էջ 60): Այս նախադասությունը բոլորովին ավելորդ է: Ավելորդ է նաև հաջորդ նախադասության փակագծերի մեջ առնվածը. «Մեկը ըսավ թե սպանելու է, մյուսը՝ թե լեզուն կտրելու է, ուրիշ մը թե (ունեցածը չունեցածը հարքունիս գրավել և) ղինքն աքսորելու է» (էջ 61):

Մենք առավելապես կենտրոնացանք Մեկիք-Վարդանյանի և Թիրյաքյանի կատարած թարգմանությունների վրա, որովհետև նրանց աշխատանքն ամբողջական է, հետեւաբար և հիմնական: Ինչ խոսք որ նման թերություններ նկատելի են նաև մյուս թարգմանիչների մոտ:

Կան նաև դեպքեր, երբ պարսկերեն կամ արաբերեն ամբողջ հատվածներ, նախադասություններ, քառյակներ ու տողեր չեն թարգմանված, ինչպես Մեկիք-Վարդանյանի, այնպես էլ Թիրյաքյանի մոտ: Դա թերևս տարբեր հրատարակության կամ ձեռագրի օգտագործման հետևանքն է:

Չնայած պարսկերեն լեզվի մեծ հմտության, թե՛ Թիրյաքյանի և թե՛ Մեկիք-Վարդանյանի մոտ, առավել կամ նվազ չափով, տեղ են գտել նաև գզալի թվով բառերի սխալ թարգմանություններ: Բերենք մի քանի օրինակներ:

زمین شور Թիրյաքյանը թարգմանել է «շոռ գետին» (էջ 29), Մաքսուտյանը՝ «ճախճախուտ վայր», իսկ Մեկիք-Վարդանյանը՝ «Թե հողը աղայինն է» (էջ 36): شور նշանակում է աղի, شور زار աղային վայր, իսկ زمین شور աղային հող: Մեկիք-Վարդանյանի մոտ բոլորովին սխալ է. «աղային» ածականը վերածվել է գոյականի: حرقه مشائخ Մեկիք Վարդանյանը թարգմանել է «շեյխի փաթթոց»: «Փաթթոցը» չալման է, իսկ «խրքեն» վերարկուն, կապան: Մի այլ տեղ «գերվիշի քուրձ» (էջ 105), իսկ Թիրյաքյանը՝ «Դերվիշի գրգլյակ» (էջ 95): «Դրգլյակ» բառն ըստ Հայկազյան բառարանի նշանակում է հագուստ, քրջլակ, քուրջ, սակայն ոչ քուրձ: «Դրգլյակը», որ նշանակում է ձին հագուստ՝ حرقه բառի թարգմանությունը չէ: حرقه նշանակում է կրոնավորի հագուստ, բայց ոչ հին:

بقال Մեկիք-Վարդանյանը թարգմանել է «մսագործ» (էջ 116), իսկ Թիրյաքյանը՝ «նպարավաճառ» (էջ 106): Մսագործը قصاب բառի թարգմանությունն է և ոչ بقال -ի:

<sup>22</sup> Ս ա ա դ ի, Գ ու լ ես Թ ա ն, Ա. Մեկիք-Վարդանյանի թարգմ., էջ 216

باغلامی عجمی Մեկիք-Վարդանյանը թարգմանել է «մի պարսիկ դու-  
լամի հետ» (էջ 40), Թիրյաքյանը «համբավ սպասավորի մը հետ» (էջ 32),  
Մաքսուտյանը «մի պստիկ պատանու հետ»։ Ինչպես տեսնում ենք ոչ մեկն  
էլ ճիշտ չէ։ Առաջինը չի թարգմանել բառը (սպասավոր), թեև իր  
ծանոթության մեջ բացատրել է, որ կարող էր բուն տեքստում գրել, երկ-  
րորդը բառի փոխարեն գրել է «համբավ», իսկ Մաքսուտյանը բոլոր-  
ովին փոխել է։ Ո՛չ պստիկ և ոչ էլ պատանի բառերը բառերի  
թարգմանությունը չեն։

دامر Մեկիք-Վարդանյանը թարգմանել է՝ «օձիք» (էջ 150), մինչդեռ  
պետք է լինի փեշ, քղանցք, իսկ استین բառը Թիրյաքյանը թարգմանել է  
«քղանցք» (էջ 140, 141, 151), մի այլ տեղ «թև», իսկ իր ծանոթագրու-  
թյան մեջ գրել է՝ «թեզանիք» (էջ 116)։ Անշուշտ ճիշտը թեզանիքն է, և կամ  
պարզապես թև, ինչպես գրել է Մեկիք-Վարդանյանը։ استان բառը սեմ,  
շեմք, Թիրյաքյանը ճիշտ է թարգմանել (էջ 141), մինչդեռ Մեկիք-Վարդան-  
յանը գրել է «ճամփա» (էջ 152)։

کسی سیر نگهتو کند Մեկիք-Վարդանյանը թարգմանելով  
Մեկիք-Վարդանյանը գրել է՝ «Արցունքներս խեղդում են ինձ՝ մեկը քեզ կուշտ  
նայելիս» (էջ 156), رشکم آید նշանակում է «խանդում եմ», մինչդեռ «ար-  
ցունք» բառը գրվում է أشک այստեղ թարգմանիչը շփոթել է أشک և آسک  
բառերը, իսկ Թիրյաքյանը՝ ճիշտ կերպով գրել է «կընախանձիմ» (էջ 145),  
որովհետև արևմտահայերենում «խանդել» բառը չկա և «նախանձել» բառը  
գործածվում է «խանդել» առումով։ سخن بطنی Մեկիք-Վարդանյանը  
թարգմանել է «սակավախոս» (էջ 26), Թիրյաքյանը «հուշիկ խոսող» (էջ 18),  
իսկ Աճառյանը՝ «հապաղկոտ»։ بطن նշանակում է համր, դանդաղ խոսելի,  
ձիշտը վերջինն է՝ Աճառյանին, իսկ حاجر, որ նշանակում է խեղճ, նվաստ,  
Մեկիք-Վարդանյանը թարգմանել է «վսիտ», Թիրյաքյանը «գձուձ», Մաք-  
սուտյանը՝ «տոգեղ»։ Սրանցից ոչ մեկն էլ ճիշտ չէ։

Ինչպես յուրաքանչյուր լեզվում, այնպես էլ պարսկերենում կան բառեր,  
որոնք մի քանի իմաստ են արտահայտում և ընդհակառակը՝ տարբեր բառեր  
միևնույն իմաստն ունեն։

میبند، Մեկիք-Վարդանյանը թարգմանել է «փեզենա» (էջ 55), իսկ  
Թիրյաքյանը «խունկ» (էջ 48)։ Ըստ Մալխասյանի բառարանի դա գարշահոտ  
բույս է, մինչդեռ խունկը անուշահոտ է։ Այդպես նաև سرای բառը, որ նշա-  
նակում է և՛ պահեստ, և՛ տուն, նմանապես درویش գերվիշ բառը, որ նշա-  
նակում է նաև աղքատ, բարեպաշտ, չրջմոլիկ, թեթևասրիկ, ըստ բառարա-  
նի՝ ստահակ, խիզախ։ Այս դեպքում երկու իմաստն էլ համապատասխանում  
է թարգմանություններին։ Այդպես նաև رفیک բառը բարեկամ, ընկեր,  
معلم մզկիթ, դպրոց, رسول դեսպան, մարդարե, حاکم գիտուն, բժիշկ, معمل  
ուսուցիչ, վարպետ և այլն։

Սրանց հակառակը բնագրում կան բազմաթիվ բառեր, որոնք ունեն  
նույն իմաստը, հոմանիշներ են։ Թրինակ՝ غلام، بنو، عباد բառերը թարգ-  
մանված են ճորտ, ծառա, ստրուկ, գերի։ Իրանք հավասարապես գործած-  
ված են թե՛ Թիրյաքյանի, թե՛ Մեկիք-Վարդանյանի և թե՛ մյուս թարգ-  
մանիչների մոտ։ Կամ عزیر، دوست، رفیک սիրելի, մտերիմ, թանկագին,  
բնկեր, բարեկամ։

Թարգմանություն մեջ, դարձյալ առավելապես Մելիք-Վարդանյանի մոտ, նկատելի է լեզվական կանոնների որոշ անտեսում, կամ այլ կերպ ասած մեղանչում հալ լեզվի քերականական օրենքների դեմ: Այսպես. «Հզորությունը գիտություն մեջ է և ոչ հարստության, մեծությունը խելքի է և ոչ տարիքի» (էջ 37): Այս օրինակում պետք է լինի՝ մեծությունը խելքի մեջ է... («Մեջ» բառը բաց է թողված): Դամ «Երա անձրեն անսահման գթառատության հասել է բոլորին և ամենուրեք փռվել է նրա սիրտը՝ լիառատ բարիքների» (էջ 16): Այստեղ պետք է լինի. «Երա անսահման գթառատության անձրեր հասել է բոլորին և լիառատ բարիքների սիրտը ամենուրեք փռվել»: Մի օրինակ ևս նույն թարգմանությունից, «Մինչև հակաթուշի դեղը Իրաքից հասցնեն, օձից խալթվածը կմեռնի» (էջ 49): Նախ ավելորդ է զեղ բառը, որովհետև հակաթուշը ինքնին արդեն զեղ իմաստը պարունակում է, և բացի այդ սխալ ժամանակով է գործածված: Պարսկերենում անորոշ է (اورادو): Պետք է լինի՝ հասցվի: Մի այլ տեղ «Թագավորը իրավացի գտավ զերվիշի խոսքերը և առաջարկեց իրենից մի բան խնդրի» (էջ 64) նախադասության մեջ դարձյալ ժամանակը ճիշտ չէ. պետք է լինի անորոշ «մի բան խնդրել»:

Մի շարք էջերում սխալ է չի» օժանդակ բայի օգտագործումը «գաղտնիք չի» (էջ 145), «վալել չի» (էջ 156), «իսկական չի» (էջ 214), փոխանակ «չէ»-ի: Առանձին դեպքերում միևնույն նախադասության մեջ թարգմանիչը մերթ գրում է ճիշտ, և մերթ էլ սխալ: Օրինակ՝ «Երեք բան հարատև չե, ապրանքը՝ որը վաճառքի համար չի, գիտությունը՝ որ խուսափում է քննադատությունից, և պետությունը՝ որ զուրկ է քաղաքականությունից»: Դամ մի շարք էջերում գործածված է «Լսածս» ձևը, մինչդեռ մի այլ տեղ «գալակիցս լսած», որ ճիշտ է: Կամ «Աստուծո՛ւմ էի կորցրածս կյանքի համար» (էջ 20), փոխանակ՝ «կորցրած կյանքիս համար»:

Ընդհանուր համաձայնություն չկա նաև մի շարք բառերի թարգմանության դեպքում: Օրինակ՝ մի տեղ Մելիք-Վարդանյանը գրում է զագի, մի այլ տեղ դատավոր, նույնիսկ միևնույն հեքիաթում (էջ 168, 170, 171, 172): Դամ՝ զոլամ, մի այլ տեղ ծառա (էջ 40):

Ինչպես արդեն ասվեց «Իռլեսթանի» թարգմանությամբ զբաղվել են նաև Մեսրոպ վ. Մաքսուռյանը, ակադեմիկոս Հր. Աճառյանը, Ա. Ամուրյանը և ուրիշներ: Չնայած սրանց թարգմանությունները հատվածային են, բայց որոշակի է մոտեցումն ու թարգմանության որակը: Այս թարգմանություններն ընդհանուր առմամբ կատարված են բնագրին հարազատ, և առավել բարև-խիղճ դեպի թարգմանական լեզուն՝ հայերենը:

Ակադեմիկոս Աճառյանի թարգմանությունն ևս ամբողջական չէ և անտիպ է, բայց մեր ձեռքի տակ եղած հատվածների ուսումնասիրությունն իրավունք է տալիս եզրակացնելու, որ այն ամենակատարյալն է:

Աճառյանի թարգմանությունները միանգամայն հարազատ են բնագրին, դերձ ավելորդ բառերից, բուն միտքն արտահայտելու համար նա չի գիմել կողմնակի միջոցների և տվել է միանգամայն հստակ, ճիշտ և, որ ամենակարևորն է, գեղեցիկ, բանաստեղծական:

Հատկանշական է, որ Սաադիի թարգմանիչները հանդիսանում են տարբեր բնագավառների ու մասնագիտությունների անձնավորություններ: Այսպես, Շեքսպիրի հայտնի թարգմանիչ Հովհաննես Խան Մասեհյան, վարդապետ Մեսրոպ Մաքսուռյան, Բիշի Հարություն Թիրյաքյան, խոշորագույն լեզվա-

բան Հրաչյա Աճառյան և ուրիշները Սակայն, չնայած այսպիսի բազմազանություն, բոլորին էլ հավասարապես հետաքրքրել և հուզել են Սաադիի ինչպես արձակ-բարոյախոսական հատվածները, այնպես էլ չափածո-հուզական բանաստեղծությունները:

Բոլորովին տարօրինակ չէ, որ Շեքսպիրի մեծ տաղանդով տարված ու ոգևորված Հ. Ս. Մասեհյանը կարող էր հրապուրվել նաև Սաադիի արևելյան մոտիվներով շարահյուսված խոհերով ու գգացումներով և կամ բժիշկ Հրթ. Թիրյաքյանը կարող էր նույնչափ սիրել ու իր կյանքի զգալի մասը հատկացնել իրանական պոեզիային ու գրականությունը:

Սակայն միանգամայն տարօրինակ կարող է թվալ, որ խոշորագույն հայագետ-լեզվաբան Հր. Աճառյանը, որ իր ամբողջ կյանքը հատկացրել էր լեզվագիտության և հայագիտության տարբեր հարցերի ուսումնասիրման և տվել բազմաթիվ ու բազմահատոր մեծարժեք աշխատություններ, կարող էր իր այդ սուղ կյանքից հատկացնել Սաադիի թարգմանությունը: Ուրեմն չպետք է զարմանալ նաև, որ Շեյխ Սաադիի ստեղծագործությունն, իր էությունից լինելով աշխարհիկ և քնարական, կարող էր խոսել մի վարդապետի հոգու հետ, ինչպիսին էր Մեսրոպ Մաքսուտյանը և ոգևորել ու մղել ընդհուպ նրա թարգմանությունը: Ուստի շատ բնական է, որ Սաադի թարգմանությունները կարող էին լայնորեն ասպարեզ գտնել ինչպես Չոպանյանի «Անահիտ»-ի, այնպես էլ Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի էջերում, ինչպես Թադիադյանցի «Ազգասեր»-ի, այնպես էլ Աղամյանի «Լուսա» հանդեսներում, բառարաններում, դասագրքերում և օրացույցներում:

Նրանց թարգմանությունները տարածվել են Թեհրանից — Փարիզ, Փարիզից — Պոլիս, Պոլսից — Կալկաթա, Նյու-Յորք, Թիֆլիս ու Ալեքսանդրապոլ:

«Գուլեսթանի» նկատմամբ ցուցաբերված այս հետաքրքրությունը խոսում է հալ ժողովրդի վերաբերմունքի, նրա տաժած սիրո և համակրանքի մասին իրանական գրականության և մասնավորապես մեծ բարոյախոս և հումանիստ Սաադիի նկատմամբ: